խնամն Տեառն ողջ եւ հանդարտ յամերամ ժամանակս ի հրճուանս իմ, որ եմն։



Հրոմիոն Պետանեան։ Երկնաժամանակ արժանոյդ՝ յօդս բարձրութեան սրբազան վայրից թողուցեալ զնեան՝ աղուտասուագին շրջուցեալ՝ զբնթացիցն ցանկամ համբոյրել հետս։

1772 Նոյեմբերի $\frac{7}{\text{ԺԷ}}$ հոկտ ի Կ. Պոլիս։

Եւ քանզի յատուկ է վերաւորելեաց այն ինչ յընկալնուլն վեր՝ զառաջինն մինչ ոգիքն են ի բերան վիրին՝ ոչ այնքան զդալ զցաւ, այլ ի հեռանալն ջերմութեան եւ սրոյ՝ ուժգինս ցաւազնիլ, բոտ այսմ օրինակի եւ իմում դիպեցաւ սրտի, զի ցկէտ բաժանման ձեր զոչ ինչ գրեթէ զգացի. իսկ ապա բանակք փղձկանաց՝ հրոսակաք արտասուաց պաշարեալ զինու ցաւոց կսկծանաց՝ խոցոտեցին զսիրտ տառապեցելոյս. ուստի եւ զաւուրս երիս յերեր տատանեալ անսփոփ տխրութեամբ, յաւուր հինգշաբաթի գնացի ի տուն պարոն Միքայէլին յոր տեսի եկեալ զԳաբրիել Վրդպ. յորոնել զտէրութիւնդ ի պէտս սսական ժողովոյ խնդրանօք Պատրիարգին. որում պատասխանեցի զքէն գնալ ի Թառապեա, եւ ի ժողովն յայն գնալդ անկարելի լինիլն, որ դարձաւ այնու ալախէմով՝ ի Պատրիարգարանն. իսկ ի միւսում աւուր, որ օրն էր ուրբաթ՝ յանդգանել կէս աւուր, եկն վէքիլ տիրացու Սարգիս, եւ կոչեալ յեկեղեցի զմիրդ Հարցանել, զոր սալախէմով չկարացի դարձուցանել, քանզի եռապուգեան հանդերձաւորեալ յաւագադրանէն՝ շրջելոց էր մինչեւ ցգտանել ապա երդմնեցուցի առաջի սեղանոյ եւ պատմեցի յայնմ պահու, յորում արտահնչեալ էք ի կսկորդէ կսկորդիլոսի